ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 17 - Ա 02 փետրվարի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի 6.1-րդ կետի պահանջները

Որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. փետրվար 2 -ի
N17-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց. մրցույթների ժամանակացույց

1 «Վարդենիսի հիվանդանոց» ՓԲԸ- 2017թ. ապրիլի 11-ին, ժամը՝ 11^{00} -ին
2.«Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ- 2017թ. ապրիլի 12-ին, ժամը՝ 11^{00} -ին
3.«Գավառի պոլիկլինիկա» ՓԲԸ- 2017թ. ապրիլի 13-ին, ժամը՝ 11^{00} -ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԽԼՂԱԹՅԱՆ